

ОПУБЛИКОВАТЬ СТАТЬЮ

в изданиях НИЦ "Социосфера"



[ПОДРОБНЕЕ](#)

СОЦИОСФЕРА

- *Российский научный журнал*
- *ISSN 2078-7081*
- *РИНЦ*
- *Публикуются статьи по социально-гуманитарным наукам*

PARADIGMATA POZNÁNÍ

- *Чешский научный журнал*
- *ISSN 2336-2642*
- *Публикуются статьи по социально-гуманитарным, техническим и естественно-научным дисциплинам*

[ПОДРОБНЕЕ](#)



СБОРНИКИ КОНФЕРЕНЦИЙ

- *Широкий спектр тем международных конференций*
- *Издание сборника в Праге*
- *Публикуются материалы по информатике, истории, культурологии, медицине, педагогике, политологии, праву, психологии, религиоведению, социологии, технике, филологии, философии, экологии, экономике*



[ПОДРОБНЕЕ](#)

I. PERSONAL DEVELOPMENT IN ONTOGENESIS



ԻՆՏԵԼԵԿՏԻ և ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Ա. Մ. Ավագյան

*Հոգեբանական գիտությունների
թեկնածու
(Երևանի պետական համալսարան,
Երևան, Հայաստան)*

Summary. In the article the author reviews the specifics between intellect and personal characteristics of the three stages of person's development. It is mentioned that connections with different level of expression have revealed between intellect and personal characteristics. Based on those, the author makes conclusion that intellect and personal characteristics are factors of hard connections.

Keywords: Intellect; empathy; personal qualities; aggression; rigidity; anxiety.

Փոխակերպվող հասարակության պայմաններում գտնվող երկրներին, ինչպիսին այսօր Հայաստանի Հանրապետությունն է, հատուկ են կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական փոփոխությունները: Անձնավորությունն անընդհատ ստիպված է ադապտացվել կատարվող փոփոխություններին և նրա ինտելեկտի և անձնային հատկությունների դրսևորումներին որակապես նոր պահանջներ են առաջադրվում: Սոցիալական միջավայրին հարմարման և անձի ինքնադրսևորման ու ինքնաիրացման տեսանկյունից հատկապես կարևորվում է ինչպես անձի ինտելեկտուալ և անձնային հատկությունների, այնպես էլ դրանց համահարաբերակցման ուսումնասիրման հիմնախնդիրը:

Մարդկային ինտելեկտի հիմնահարցը նոր չէ, այն վաղուց ի վեր արժանացել է հոգեբանների, մանկավարժների և մի շարք այլ բնագավառների մասնագետների ուշադրությանը: Ենթադրվել է, որ ինտելեկտն ու ընդունակությունները պայմանավորում են գիտելիքների ձեռքբերման գործընթացն ու աշխատանքի արդյունավետությունը, քանի որ նպաստում են նպատակամետ վարքի, ռացիոնալ մտածողության, շրջապատող աշխարհի հետ արդյունավետ համագործակցության և մի շարք այլ կարևորագույն խնդիրների

իրականացմանը: Ինտելեկտի ուսումնասիրությունը կարևորվում է սոցիալական նոր պայմաններին մարդու ադապտացիայի գործում ունեցած նրա բացառիկ նշանակությամբ, քանի որ այն դիտվում է որպես մարդու կենսագործունեության նոր պայմաններին հարմարվելու որոշակի ընդունակություն:

Թեև ինտելեկտի հոգեբանությունը հոգեբանական գիտության մեջ բավականին կայացած ոլորտ է, այնուամենայնիվ, ինտելեկտը սոցիալական ադապտացիայի հետ կապող կոնկրետ մեխանիզմների առումով դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ: Հենց այս տեսանկյունով է դիտարկվում ինտելեկտի և անձնային տարբեր հատկությունների համահարաբերակցման խնդիրը:

Հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության մեջ հաճախ են քննարկվում ինտելեկտի, ընդունակությունների զարգացման մակարդակի և անձնավորության գծերի փոխադարձ կապի բացահայտմանն ուղղված հետազոտությունները, որոնք վերաբերվում են ոչ միայն ինտելեկտի և անձնային հատկությունների փոխկապակցվածությանը, այլև ինտելեկտի և անձի հոգեկան այլ ոլորտների, ինչպես նաև ինտելեկտի և սոցիալ-տնտեսական ու հասարակական բնույթի երևույթների փոխպայմանավորվածությանը:

Այնուամենայնիվ, գործոնային տեսության շրջանակներում ինտելեկտի և անձնավորության գծերի փոխկապակցվածության խնդրին վերջնական լուծում չի տրվել: Դ.Մայերսը նշում է, որ հոգեբանների ուսումնասիրություններում անձնավորության գծերի և ինտելեկտի կապը քիչ է ուսումնասիրված, եղած արդյունքներն էլ խիստ հակասական են [3; էջ 141]:

Անձնավորության ինտելեկտի և անձնային առանձնահատկությունների փոխպայմանավորվածության հիմնահարցն ընդգրկում է դեռևս չլուծված բազմաթիվ հոգեբանական հարցեր: Դեռևս բավարար լուծում չեն ստացել ինտելեկտի, անձնավորության ապրումակցման, կամային որակների, ընդհանուր ակտիվության, ագրեսիվության, անձի բնավորության շեշտվածության և հոգեբանական մի շարք այլ հատկությունների փոխպայմանավորվածությունը պարզաբանող հարցերը: Այդ անհրաժեշտությունն էլ հիմք է ծառայել մեր ուսումնասիրության համար:

Մեր հետազոտության նպատակն է բացահայտել ինտելեկտի և անձնային հատկությունների համահարաբերակցության առանձնահատկություններն անձի զարգացման տարբեր փուլերում:

Հետազոտության հիմքում ընկած է այն հիմնական վարկածը, ըստ որի՝ ինտելեկտը, որպես հոգեբանական ֆունկցիոնալ մետահամակարգ ազդում է անձնային որոշակի հատկությունների՝ ապրումակցման, կամքի ուժի, ագրեսիվության, անձնային և իրավիճակային տազնապայնության դրսևորման վրա: Անձնային հատկությունների և ինտելեկտի համահարաբերակցությունը անձի զարգացման յուրաքանչյուր փուլում ունի դրսևորման որոշակի առանձնահատկություններ: Որոշ հատկություններ առավել սերտ կապի մեջ են ընդհանուր ինտելեկտի հետ, ուրիշները՝ վերբալ:

Հետազոտությունն անցկացվել է անձի զարգացման երեք հաջորդական խմբերում՝ 13-15 տարեկան, 17-19 տարեկան և 25 - 30 տարեկան: Հետազոտությանը մասնակցել են 211 հետազոտվողներ:

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են ծառայել Ռ. Ֆ. Լոմովի, Վ.Դ. Շադրիկովի, Վ.Վ. Դրուժինինի համակարգային մոտեցումը, Պ. Կ. Անոխինի ֆունկցիոնալ համակարգերի տեսությունը, անձի ձևավորման և զարգացման՝ Բ. Գ. Անանևի տեսությունը, ինտելեկտի ընդհանուր և մասնակի գործոնների՝ Չ. Սպիրմենի տեսությունը:

Հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորվել է ընտրված մեթոդոլոգիական հիմքերով և ուսումնասիրության առարկայով: Հետազոտության ընթացքում օգտագործվել են դիտման, հոգեբանական զրույցի, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդները և հետևյալ ստանդարտացված մեթոդիկաները.

1. Ջ. Ռավենի «Աստիճանաբար բարդացող աղյուսակներ» մեթոդիկան՝ ինտելեկտի հետազոտման նպատակով[6],
2. «Չ. Դ. Սպիրբերգի և Յու. Լ. Խանինի Իրավիճակային և անձնային տազնապայնության մակարդակի գնահատման սանդղակ»-ը [5; էջ 39-45],
3. «Ագրեսիվության և ռիզիդության ինքնագնահատման սանդղակը»՝ ըստ Օ. Պ. Ելիսենի[2; էջ 220-221],
4. «Ապրումակցման ընդունակությունների ինքնագնահատում» մեթոդիկան՝ ըստ Օ. Պ. Ելիսենի[2; էջ 222-224],
5. «Ընկճվածության ինքնագնահատման մեթոդիկան» ըստ Օ. Պ. Ելիսենի[2; էջ 227-228],
6. «Հոգեվիճակի ինքնագնահատման մեթոդիկայի» ընդհանուր ակտիվության սանդղակը ըստ Օ. Պ. Ելիսենի[2; էջ 229],

7. «Անձի բնավորության շեշտվածությունը և նյարդահոգեբանական անկայունությունը» ախտորոշող մեթոդիկան՝ ըստ Ա. Կարելիինի[5; էջ 68-92],

8. «Կամքի ուժի թեստ» մեթոդիկան, ըստ Ռ. Ս. Նեմովի[4; էջ 473 - 477],

9. Ռ. Բ. Քեթթելի «16 գործոնային անձնային հարցարանի C ձևը»[1; էջ 232-265]:

Ստացված տվյալները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության, որի արդյունքում պարզվել է, որ ինտելեկտը կամային գործընթացների, ապրումակցման, անձնավորության մասնագիտական ուղղվածության կարգավորող գործառույթ ունի:

Մեր կողմից ուսումնասիրված տարիքային երեք խմբերում համահարաբերակցային կայուն կապեր են բացահայտվել անձնավորության ինտելեկտի և կամային գործընթացների միջև: 13–15 տարեկան հետազոտվողների ինտելեկտի և անձնային հատկությունների հետազոտության արդյունքների համահարաբերակցային վերլուծության արդյունքում $P=0,01$ հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի և կամքի ուժի $r = 0,796$ միջև: Կամքի ուժի հետ կապեր են բացահայտվել նաև տարիքային մյուս երկու խմբերում: 17-19 տարեկանների խմբում այդ կապն արտահայտվում է $P=0,01$ հավաստիությամբ $r=0,246$ ցուցիչով, իսկ 25-30 տարեկանների խմբում $P=0,05$ հավաստիության $r=0,271$ ցուցիչով: Կամային գործընթացներում ինտելեկտուալ օպերացիաների շնորհիվ գնահատվում է դրդապատճառներից յուրաքանչյուրը, և մշակվում են նպատակին ուղղված կամային վարքի դրսևորման ձևերը: 13-15 տարեկանների խմբում $P=0,05$ հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի և ապրումակցման (էմպաթիկ) ընդունակության միջև $r=0,276$: Այսինքն, անձնավորության մոտ ապրումակցման կարողության բարձր մակարդակը պայմանավորում է ինտելեկտի բարձր մակարդակով: Այս կապը պահպանվում է նաև անձի զարգացման 17–19 և 25-30 փուլերում: Մասնավորապես, 17-19 տարեկանների խմբում այն արտահայտվել է $P=0,01$ հավաստիության $r = 0,285$ ուժգնությամբ, իսկ 25-30 տարեկանների խմբում, $P=0,05$ հավաստիության $r = 0,289$ ուժգնությամբ: Փաստորեն, ապրումակցման ընդունակության հետ ինտելեկտը բոլոր երեք խմբերում կապվել է դրական կապով: Ապրումակցման հիմքում ընկած է հոգեվիճակի գնահատման և վերաբերմունքի մշակման գործընթացների կարգավորումը, ինչը պայմանավորված է անձի ինտելեկտուալ հնարավորությամբ:

17-19 տարիքային փուլում, երբ ձևավորվում է մասնագիտական ուղղվածությունը, արտահայտվում է ինտելեկտի և ուղղվածության փոխկապակցվածությունը: 25-30 տարեկանում ինտելեկտի ազդեցությունը անձի մասնագիտական ուղղվածության վրա ավելի բարձր արտահայտվածություն է ստանում:

Անձի զարգացման տարբեր փուլերում ինտելեկտը հանդես է գալիս որպես ազդեցիկության, անձնային և ռեակտիվ տազնապայնության, ռիզիկոյության, ճնշվածության, նյարդահոգեբանական անկայունության կարգավորման գործոն: Անձնային տազնապայնության և ազդեցիկության դրսևորման մակարդակը կարգավորվում է ինտելեկտի մակարդակով: Ինտելեկտի և ազդեցիկության միջև $P=0,01$ հավաստիության $r=-0.383$ ուժգնության բացասական կապ է բացահայտվել 25-30 տարեկանների խմբում: Նախորդ երկու տարիքային խմբերում ինտելեկտի և ազդեցիկության միջև կապ չի արտահայտվել:

Անձի զարգացման 13-15 փուլում $P=0,01$ հավաստիության բացասական կապ է բացահայտվել $r=-0,417$ ինտելեկտի և անձնային տազնապայնության միջև: 17-19 տարեկանների խմբում այս երկու հատկությունների հարաբերության բացասական բնույթը պահպանվում է, սակայն կապն այնքան թույլ է, որ ճշտության մակարդակը թույլ չի տալիս այն որպես կապ դիտարկել $r=-0,174$, իսկ 25-30 տարեկանների խմբում կոռելյացյան դրսևորվում է $P=0,05$ հավաստիությամբ $r=-0,319$ ուժգնությամբ: Անձնային տազնապայնությունը մեր կողմից օգտագործված մեթոդիկայում դիտարկվում է որպես անձի կայուն բնորոշիչ: Ստացված բացասական կապը վկայում է այն մասին, որ որքան բարձր է ինտելեկտի մակարդակն, այնքան անձնային տազնապայնության մակարդակը ցածր է: Ստացվում է, որ եթե մարդը մշակված ադապտացիոն մեխանիզմ (ինտելեկտ) ունի, ուրեմն նա մոտ անձնային տազնապայնությունը թույլ է արտահայտվում, որովհետև անձնային տազնապայնությունը ձևավորվող հատկանիշ է, անձը տազնապում է, եթե չի կարողանում խնդիրները լուծել, իսկ ինտելեկտը տվյալ դեպքում խանգարում է այդ հատկանիշի ձևավորման գործընթացին:

Անձնային տազնապայնությունը, ազդեցիկությունն առավել ցցուն դրսևորում են ունենում ինտելեկտուալ ցածր մակարդակի պատճառով, երբ անորոշ իրադրությունների լուծումը դժվարանում է: Միջինից բարձր ինտելեկտը հանդես է գալիս որպես ադապտիվ մեխանիզմ, ինչի շնորհիվ ազդեցիկություն և տազնապայնություն չի դրսևորվում: Իրադրային տազնապայնության մակարդակը համարժեք է

իրադրության բարդությանը, իսկ անձնային տազնապայնությունը իր մեջ ներառում է նաև իրադրությանը տրվող տազնապային ռեակցիան: Ինտելեկտի բարձր մակարդակի պայմաններում այն վարքի կառավարման գերակա գործառույթ ունի և կարգավորում է անկայուն վարքի դրսևորումները: Կարգավորման գործընթացը բարդանում է, եթե նյարդահոգեբանական անկայունությունը բարձր է: 17-19 տարիքային փուլը, 13-15 և 25-30 տարիքային փուլերի համեմատությամբ, անձի զարգացման հարաբերականորեն կայուն շրջան է, այդ պատճառով էլ այս փուլում անձնավորության անկայուն վարքը ինտելեկտի կողմից առավել հաջող է կառավարվում: Անձնավորության՝ ընկճված վիճակի մեջ ընկնելու հավանականությունը պայմանավորվում է նրա ինտելեկտով, խնդրի լուծման բարդության աստիճանով և հավակնությունների մակարդակով:

Անձնային որոշ հատկություններ կարգավորվում, կառավարվում են ընդհանուր ինտելեկտի կողմից, մյուսները՝ վերբալ: Ընդհանուր ինտելեկտն ավելի գերակա դեր ունի, քան ինտելեկտի վերբալ տեսակը. վերբալ ինտելեկտի կառավարող գործառույթն առավել ակտիվորեն է դրսևորվում անձի զարգացման 17-19 տարիքային փուլում և կարգավորում է անձնային այն հատկությունները, որոնք արտաքին դրսևորվածություն ունեն՝ էքստրավերտությունը, շփվողականությունը, բնավորության շեշտվածության շիզոիդ, հիստերոիդ, էքսպլոզիվ տիպերը: Ընդհանուր ինտելեկտը անձի զարգացման երեք փուլերում գործող կարգավորման ճկուն համակարգ է:

Անձի զարգացման տարբեր փուլերում, կախված տվյալ փուլում առկա խնդիրներից, անձնային որոշակի հատկություններ՝ կամքի ուժը, ապրումակցումը, ընդհանուր ակտիվությունը, ագրեսիվությունը, անձնային տազնապայնությունը, ինչպես նաև անձի մասնագիտական ուղղվածությունը, առավել ակտուալ են դառնում, և ակտուալացված հատկությունների նկատմամբ ինտելեկտի կարգավորող գործառույթը մեծանում է:

Անձնային հատկությունների փոխկապակցվածությունը պայմանավորված է միմյանց վրա ունեցած փոխազդեցության բնույթով: Մասնավորապես, ռիզիդությունը՝ որպես անձնային հատկություն, խոչընդոտում է կամքի ուժի, ընդհանուր ակտիվության, ինքնահսկողության, մասնագիտական ուղղվածության ձևավորմանը և նպաստում անձնային տազնապայնության, ընկճվածության, բնավորության շեշտվածության փսիխոասթենիկ և էքսպլոզիվ տիպերի դրսևորմանը:

Այսպիսով, անձի զարգացման տարբեր փուլերում ինտելեկտը անձնային որոշ հատկությունների դրսևորվածության մակարդակը կարգավորող գործառույթ ունի:

Գրականության ցանկ

1. Большая энциклопедия психологических тестов, Автор составитель А. Карелин, М., Экспо, 2001. с. 414.
2. Елисеев О. П. Практикум по психологии личности, Санкт-Петербург, Питер, 2001, стр. 560.
3. Маерс Д. Социальная психология, “Питер” 1997, стр. 688.
4. Немов Р. С. Психология. Книга 3, М., Владос, 2002, стр. 56-156.
5. Психологические тесты. Под редакцией А. А. Карелина. Том 1, М., Владос, 1999. стр. 39-45.
6. Raven G. Progressive Matrices. Psychodiagnostica, narodny rodnik, Bratislava. P.60



СРОЧНОЕ ИЗДАНИЕ МОНОГРАФИЙ И ДРУГИХ КНИГ



*Два места издания Чехия или Россия.
В выходных данных издания
будет значиться*


**Прага: Vědecko vydavatelské
centrum "Sociosféra-CZ"**

или

**Пенза: Научно-издательский
центр "Социосфера"**

РАССЧИТАТЬ СТОИМОСТЬ

- Корректурa текста
- Изготовление оригинал-макета
- Дизайн обложки
- Присвоение ISBN



У НАС ДЕШЕВЛЕ

- Печать тиража в типографии
- Обязательная рассылка
- Отсудка тиража автору